



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ \_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2019 թ.

Հետաքննող լրագրողներ ՀԿ-ի  
Հետք» թերթի լրագրող  
Գրիշա Բալասանյանին

Ձեր հարցման վերաբերյալ հայտնում եմ, որ Լոռու մարզի 56 համայնքներից միայն Ալավերդի և Սպիտակ համայնքներում կան վարկային պարտավորություններ, ընդ որում՝

1. Ալավերդի խոշորացված համայնքի Հաղպատ բնակավայրի (նախկինում Հաղպատ համայնք) կողմից ձեռք բերված գյուղտեխնիկայի համար „ՓՄՁ ներդրումներ,, ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերության հետ 26.05.2014թ. կնքվել է թիվ 909062Լ ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագիր՝ 8181.0 հազ. դրամ գումարով, պայմանագրում նախատեսված գումարի վերջնաժամկետը 01.11.2019թ. է, վճարման ենթակա գումարը 14.05.19թվականի դրությամբ կազմում է 1900.2 հազ. դրամ:
2. Սպիտակ համայնքի ենթակայության «Սպիտակի բնակարանների սպասարկման գրասենյակ» ՀՈԱԿ-ի և ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ-ի (ք. Վանաձոր) միջև 12.09.2017թ. կնքվել է վարկային պայմանագիր՝ 1400.0 հազ. դրամի չափով (թիվ EM17/01412, վարկային կոդ թիվ 205022213487L001)՝ «Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա» հիմնադրամի «Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունը Վայք և Սպիտակ քաղաքներում» ծրագրի շրջանակներում Սպիտակ համայնքում բազմաբնակարան բնակելի շենքերում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացման միջոցառումներ իրականացնելու նպատակով՝ որպես բնակիչների կողմից ներդրման միջոց: Վարկային պարտավորությունները մարվում են բնակիչների հետ կնքված

պայմանագրերի համաձայն՝ սահմանված ժամանակացույցով: Վարկային պայմանագիրը կնքվել է 36 ամիս ժամկետով՝ առանց գրավադրման: Վարկի հիմնական գումարի մնացորդը 12.05.2019 թվականի դրությամբ կազմում է 715.23 հազ. դրամ:

Հարգանքով՝

 Invalid signature

X 

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ